Արցախ. ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ՀԻՆ ԵՆ, ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԸ՝ ՆՈՐ

Ինչպես արդեն հաղորդվել է, սեպտեմբերի 20-ին Մոսկվայում տեղի ունեցավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստ, որտեղ այլ հարցերի հետ մեկտեղ քննարկվում էին նաև Ազգությունների խորհրդի ԼՂԻՄ-ի հարցի ուսումնասիրությամբ զբաղված հանձնաժողովի աշխատանքի արդյունքները:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանում հավատարմագրված Արմենպրեսի թղթակիցներ Լ. Ազրոյանը և Զ. Բալագյոզյանը դիմեցին Արցախի պատգամավորության անդամներից մեկին՝ Բորիս Դադամյանին, խնդրելով պատմել այդ նիստի և քննարկվող հարցի առթիվ հայ դեպուտատների բռնած դիրքի մասին:

— Նիստը տեղի էր ունենում Մ. Ս. Գորբաչովի նախագահությամբ,— ասաց նա:— Դրան մասնակցում էին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահի տեղակալները, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կոմիտեների և հանձնաժողովների նախագահները: Կային նաև մեծ թվով հրավիրվածներ, այդ թվում նաև ԼՂԻՄ-ից ընտրված ժողովրդական դեպուտատները լրիվ կազմով:

Քննարկումը տևեց ավելի քան երեք ժամ: Բոլոր ցանկացողները հնարավորություն ունեին արտահայտվել հանգիստ իրադրության մեջ, շարադրել իրենց դիրքորոշումը:

Հայ դեպուտատների դիրքորոշումը սկզբունքորեն հայտնի է: Այն սահմանված է ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի նստաշրջանի 1988 թվականի փետրվարի 20-ի սահմանադրական որոշումով: Դա մայր հայրենիքի՝ Հայաստանի հետ Արցախի վերամիավորումն է ինքնորոշման հիման վրա:

Ադրբեջանական կողմի դիրքորոշումը տրամագծորեն հակառակ է, որը մերժում է ինքնորոշման իրավունքը և գտնում, որ մարզը ոչ մի պարագայում չի կարող օտարվել Ադրբեջանից:

Նախագահության նիստում մեզ ծանոթացրին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ազգային քաղաքականության և ազգամիջյան հարաբերությունների կոմիտեի ներկայացրած որոշման նախագծին: Հայկական պատգամավորությանը այդ նախագիծը իր բոլոր դրույթներով ձեռնտու չէր: Այդ նախագիծը ավելի շուտ մի փորձ էր Ղարաբաղի պրոբլեմի լուծման պատրանք ստեղծել: Օրինակ, նախատեսվում էր ԼՂԻՄ-ը թողնել Ադրբեջանի սահմաններում՝ այն ենթարկելով կենտրոնին: Ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի հատուկ կառավարման կոմիտեն վերանվանել կառավարման ժամանակավոր արտակարգ հանձնաժողով: Ընդ որում ենթադրվում էր դրա կազմի մեջ մտցնել Բաքվի ներկայացուցիչներին: Անհասկանալի առաջարկություն է:

Հարց է ծագում, երբ այդ հանձնաժողովի կազմի մեջ մտցվում է Ադրբեջանի ներկայացուցիչ, այդ դեպքում ինչպես գնահատել Ղարաբաղը կենտրոնին ենթարկելու մասին հայտարարությունը: Ըստ իս, դա կլինի մոսկովյան-ադրբեջանական համատեղ կառավարում: Այդ դեպքում ինչ միտք կա օգտագործել «ենթարկում կենտրոնին» արտահայտությունը:

ԼՂԻՄ-ից ընտրված ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներից յուրաքանչյուրը նախագահության նիստում արտահայտեց իր վերաբերմունքը որոշման նախագծի այդ կետի և մյուս կետերի նկատմամբ: Եվ այնժամ Մ. Ս. Գորբաչովը, համոզվելով, որ այդ նախագիծը վերջնամշակման կարիք ունի, ընդ որում անպայման հաշվի առնելով արտահայտված մտքերն ու առաջարկությունները, հանձնարարեց մեկ շաբաթվա ընթացքում նախապատրաստել առաջարկությունների նոր տարբերակ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության անդամներին, ԼՂԻՄ-ից ընտրված ժողովրդական դեպուտատներին ծանոթացնել դրանց՝ այն հաշվով, որ այդ հարցը մոտակա լիագումար նիստերից մեկում դրվի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պալատների անդամների քննարկմանը:

— Ընկեր Դադամյան, ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքը «Ադրբեջանի սահմաններում թողնելու» այդ հարցադրման նկատմամբ: Ինչքանո՞վ է դա սահմանադրական և համապատասխանո՞ւմ է արդյոք միջազգային իրավական փաստաթղթերի դրույթներին:

— Մ. Ս. Գորբաչովը գտնում է, և դրան երևի չի կարելի չհամաձայնել, որ ԼՂԻՄ-ի պրոբլեմը լուծելիս հաղթողներ չպիտի լինեն: Ես անձամբ դա այնպես եմ հասկանում, որ խոսքը վերաբերում է փոխզիջմանը, հետևաբար լուծումը պետք է գտնվի կողմերի դիրքորոշումների միջև ընկած ճանապարհի կեսին: Մենք առայժմ ներկայացված նախագծում այդպիսի լուծում չենք տեսնում: Կարծում եմ, որ փոխզիջում կլինի, ու ես դա ասացի նախագահության նիստում, Ադրբեջանի կազմից ԼՂԻՄ-ի դուրսբերումը և նրա ենթարկումը կենտրոնին որպես միութենական ֆեդերալ տերիտորիա: Իմ կարծիքով, հենց սա է լրիվ համապատասխանում «հաղթողներ չպիտի լինեն» թեզիսին:

— Մենք հաճախ ենք ասում, որ Ղարաբաղի պրոբլեմին քաղաքական լուծում է պետք: Դա նշանակո՞ւմ է արդյոք «սահմանադրական լուծում»:

— Այո, միանգամայն ճիշտ է: Միայն սահմանադրական հիման վրա: Սակայն վերջին ժամանակներս մենք հաճախ ենք գանգատվում մեր սահմանադրության անկատարելությունից, որը թույլ չի տալիս լրիվ չափով իրականացնել այս կամ այն հարցի ինքնորոշման իրավունքը: Դա հենց այդպես է:

Բայց ես կուզենայի ուշադրություն հրավիրել այն բանի վրա, որ Խորհրդային Միությունը ստորագրել է մի ամբողջ շարք միջազգային պակտեր, ստորագրել է թե ՄԱԿ-ի կանոնադրությունը, թե տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային պակտը, քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին պակտը և վերջապես ամենագլխավոր միջազգային փաստաթղթերից մեկը՝ մարդու իրավունքների դեկլարացիան, այսինքն մենք ընդունում ենք միջազգային ընկերակցության նորմաները սահմանող բոլոր հիմնարար փաստաթղթերը: Քանի որ մենք վավերացրել ենք այդ փաստաթղթերը ու առավել ես մտադրվում ենք ստեղծել իրավական պետություն, ապա պարտավոր ենք սերտորեն հարգել այս սկզբունքները:

Այսպես ուրեմն, քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային պայմանագրի երկրորդ հոդվածում ասվում է, որ եթե ինչ-որ բան չի նախատեսված գոյություն ունեցող օրենսդրական միջոցառումներով, ապա սույն պայմանագրին մասնակցող ամեն մի պետություն պարտավորվում է իր սահմանադրական ընթացակարգերին և սույն պայմանագրի դրույթներին համապատասխան ձեռնարկել այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել սույն պայմանագրում ճանաչվող իրավունքների իրականացման համար: Դա վկայում է, որ միջազգային ընկերակցությունը գտնում է, որ միջազգային իրավունքի գերակայությունը անվերապահելի է: Եթե սահմանադրությունը չի համապատասխանում այն պայմանագրերին ու դաշնագրերին, որոնց տակ դրված է տվյալ պետության ստորագրությունը, ապա հարկավոր է փոփոխել սահմանադրությունը, այն համապատասխանեցնել միջազգային փաստաթղթերին: Փաստորեն մեր պետությունը, որի ստորագրությունը նույնպես դրված է միջազգային ակտերի տակ, պետք է դա աներ այդ փաստաթղթերի վավերացումից անմիջապես հետո: Բայց եթե մենք դա չենք արել այն ժամանակ, ապա ինչն է խանգարում դա անել հիմա, համապատասխան ուղղումներ կատարել ԽՍՀՄ սահմանադրության մեջ:

Ուզում եմ ձեր ուշադրությունը հրավիրել հետևյալի վրա. միջազգային վավերագրերում, մասնավորապես տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին առնչվող դաշնագրերում առաջին կետը միանման է: Այն հռչակում է. բոլոր ժողովուրդները ունեն ինքնորոշման իրավունք: Այդ պատճառով նրանք ազատորեն սահմանում են, իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը: Ուրեմն հարց է ծագում. ով իրավունք ունի մեզ արգելել օգտվելու մեր ինքնորոշման իրավունքից: ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատների մարզային խորհուրդը 1988 թվականի փետրվարի 20-ին արդեն որոշում կայացրեց ինքնորոշման մասին:

Քիչ առաջ խոսեցի ԼՂԻՄ-ի հարցի փոխզիջողական լուծման հնարավորության մասին: Ներեցեք բառախաղի համար, բայց փոխզիջումը ընդունելով, մենք ինքներս դիմում ենք փոխզիջման: Չէ որ ըստ Լենինի հետևում է, որ եթե ժողովուրդը ինքնորոշվել է, ապա երկրորդ կարծիք լինել չի կարող: Եվ չի պահանջվում ոչ Գերագույն խորհրդի, ոչ էլ այլ մարմնի կարծիքը: Եթե ԼՂԻՄ-ի մարզային նստաշրջանը որոշում է ընդունել, ապա այն վերջնական է և քննարկման ենթակա չէ:

— Եթե Գերագույն խորհրդի նստաշրջանում ԼՂԻՄ-ի պրոբլեմը քննարկելիս ձեզ ելույթի հնարավորություն տային, դուք նախ և առաջ ի՞նչ կասեիք:

— Ես դեպուտատների ուշադրությունը կհրավիրեի այն բանի վրա, որ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների դաշնագրի երրորդ հոդվածում ասված է, որ սույն դաշնագրին մասնակցող բոլոր պետությունները պարտավոր են ՄԱԿ-ի կանոնադրության դրույթին համապատասխան խրախուսել ինքնորոշման իրավունքի իրականացումը և հարգել այդ իրավունքը:

Եվ այստեղ ես ափսոսանքով պետք է խոստովանեմ, որ կենտրոնի կողմից օրենքի այդ տառի նկատմամբ հարգանք մենք մինչև օրս չենք տեսել: Ավելին, ԼՂԻՄ-ի բնակչության ակտիվությունը «մարելու» համար մարզը զրկվեց իր մարմիններից. ցրվեցին կուսակցության մարզկոմը և ժողովրդական դեպուտատների մարզխորհուրդը և սահմանվեց կառավարման հատուկ ձև:

— Ի՞նչ եք սպասում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում այդ հարցի քննարկումից:

— Ինչ եմ ես սպասում նստաշրջանում հարցի առաջիկա քննարկումից: Դարձյալ կիսամիջոցներ: Դրանք ինձ ներկայանում են որպես մի հին հիմնակմախք, մի տեսակ զարդարված տոնածառ, որի վրա կախելու են նոր խաղալիքներ:

Ի դեպ, առաջ չանցնենք: Գերագույն խորհրդի պալատների լիագումար նիստում հանձնաժողովների առաջարկությունների քննարկումը, իսկ այնուհետև որոշման նախագիծը ցույց կտան, թե որքանով է մոտեցել արցախյան պրոբլեմը իր տրամաբանական ավարտին:

ԶԲԱՂԵՑՐՈՒ ԶՈՀՎԱԾԻ ՏԵՂԸ

... Երբ Ուլյանովսկից թռած ԻԼ—76-ը ուղղություն վերցրեց դեպի Հայաստան, ինքնաթիռում գտնվողներից ոչ մեկը չէր կարող իմանալ, որ բոլորովին չնչին տարածություն է մնացել մինչև վայրէջքադաշտ....

... Երբ դու լսեցիր սարսափելի լուրը, ցնցվեցիր՝ մի ցավալի ցուցակ ևս լրացրեց շարունակվող Դժբախտության զոհերի մարտիրոսագրությունը: Դեռ երեկ Հայաստանը ողբում էր Հարավսլավիայի որդիների կորուստը, իսկ այսօր սգո ծաղկեպսակի մեջ նոր ժապավեններ են ներհյուսվում: Սպիտակի փլատակները տակնուվրա անող ձեռքերը այժմ եղբայրական գերեզման են փորում: Ռուսաստանից ժամանող ինքնաթիռները չհասցրեցին մեզ օգնության գալ:

Իսկ աղետի գոտին տենդի մեջ է: Այժմ այնտեղ՝ այդ գոտում, նույնքան ծանր է վիճակը, որքան ութսունութի դեկտեմբերյան այն ցուրտ օրերին: Մենք անարգանքի սյունին ենք գամում նրանց, ովքեր ջանում են խեղդել մեզ, կտրելով արտաքին աշխարհից. բայց դա քիչ է: Մենք պետք է մեր հույսը ինքներս մեզ վրա դնենք: Այլ ելք չկա: Մա՛րդ: Եթե դու ի զորու ես ամեն ինչ դեն նետել և մեկնել այն մարդկանց մոտ, ովքեր սպասում են քո օգնությանը՝ արա՛ այդ բանը: Մի մոռացիր, որ խոսքը վերաբերում է ՔՈ ժողովրդին, ՔՈ եղբայրներին: Աղետի գոտին վտանգի մեջ է:

Եթե դու կատարել ես քո ընտրությունը, բոլորովին քիչ բան է մնում՝ դիմել ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԿԵՄ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՆԵՐԿՐԱԾԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՇՏԱԲ, որտեղ կամավորական ջոկատներ են կազմավորվում: Վստահ ենք, որ դու այնտեղ կգտնես համախոհներ:

Հեռախոսներ՝ 52-98-25, 58-80-05: